

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ Կոտայքի մարզ. գ. Նոր Գեղի. +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունիսի 2019 թվականի N 223

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱԽՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏԵԿՈՂ ՊԵՏՈՒԹՅԱՆ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ
ԳՈՒՅՔԻ և ՀՈՂԱՄԱՍՆՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՅՈՒՅԹՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴՆԵՐԻ)
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԵԿ ԱՆՑԿԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՐ ՀԱՍՏԱՏԵՂՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Նոր Գեղի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող գույքի և հողամասերի հրապարակային սակարկություններով (մրցույթներով և աճուրդներով) տրամադրման և օտարման աշխատանքների կատարման կազմակերպումն ապահովելու նպատակով՝ որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող գույքի և հողամասերի հրապարակային սակարկությունների՝ մրցույթների և աճուրդների, կազմակերպման աշխատանքային կանոնակարգերը՝

- 1) Հողամասերի մրցույթների կազմակերպման և անցկացման աշխատանքային կանոնակարգը՝ համաձայն հավելված N 1-ի.
- 2) Հողամասերի աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքային կանոնակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.
- 3) Գույքի մրցույթների կազմակերպման և անցկացման աշխատանքային կանոնակարգը՝ համաձայն հավելված N 3-ի.
- 4) Գույքի մրցույթների կազմակերպման և անցկացման աշխատանքային կանոնակարգը՝ համաձայն հավելված N 3-ի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՒՆԱԿԱՐԳ

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԸՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԸՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԳԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԱՆՑԿԱՅՄԱՆ

1. Նոր Գեղի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի մրցույթների կազմակերպման ու անցկացման հետ կապված գործընթացները և հողամասերի մրցույթային կարգով տրամադրվող աշխատանքների կազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-80-րդ, բաղացիական օրենսգրքի 463-464-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման, Նոր Գեղի համայնքի ղեկավարի սույն որոշման պահանջներին և սույն ընթացակարգին համապատասխան:
2. Մրցույթներն անցկացվում են Նոր Գեղի համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված՝ Նոր Գեղի համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի հրապարակային սակարկությունների՝ մրցույթների, կազմակերպման և անցկացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից:
3. Մրցույթը սակարկությունների ձև է, որի ընթացքում հանձնաժողովի եզրակացությանը հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է լավագույն պայմանները:
4. Նոր Գեղի համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի մրցույթները՝ (այսուհետ՝ մրցույթ), անցկացվում են բաց, որին կարող է մասնակցել ցանկացած անձ:
5. Մրցույթի սակարկությունների մասնակիցներ կարող են դառնալ ֆիզիկական և իրավաբանական անձինք:
6. Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի առարկա հանդիսացող առանձնացված հողամասերի վերաբերյալ տեղեկություններ են ստանում «azdarar.am» պաշտոնական ինտերնետային կայքում և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվող ծանուցումներից:
7. Հետաքրքրող հողամասի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ բաղաբացիները կարող են ստանալ Նոր Գեղի համայնքապետարանում:
8. Գաղաբացիների ցանկության և պահանջի դեպքում մրցույթի կազմակերպչի կողմից բաղաբացուն տրամադրվում է մրցույթի կազմակերպման ընթացակարգի և հետաքրքրող հողամասի մրցույթային փաթեթը (մրցույթին մասնակցել ցանկացողների կողմից ծրարով ներկայացվող փաստաթղթերի ցանկ, երակետային տվյալներ, գլխավոր հատակագծի օրինակ (պետության կարիքների համար վերցված տարածքներում բնակելի և հատարակական նշանակության ներդրումային ծրագրերի իրականացման, իրացման աշխատանքների ավարտից հետո հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման մրցույթների դեպքում՝ հատակագիծ-սխեմա), տիպային պայմանագրի օրինակ, նշահարման ակտ, հասցեի տրամադրման մասին տեղեկանք):
9. Գաղաբացիները փաթեթին ծանոթանալուց, հողամասի սխեմատիկ ուսումնասիրությունից հետո տեղում (բնության մեջ) բնարված տարածքին ծանոթանալու ցանկության դեպքում կարող են այցելել հողատարածք՝ սակարկությունների կազմակերպչի կողմից լիազորված համապատասխան մասնագետների ուղեկցությամբ:
10. Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են.
 - 1) սահմանված ձևի հայտ,
 - 2) մասնակցության վճարի անդորրագրի օրինակը և անձնագիրը,
 - 3) իրավաբանական անձինք՝ պետական գրանցման վկայականի և կանոնադրության հաստատված պատճևը և մասնակցության վճարի անդորրագրի օրինակը,

- 4) մրցույթի անցկացման ծանուցման մեջ նշված չափով նախաձեռնարր մուծված լինելու մասին անդորրագիրը:
- 5) մրցույթի հայտերը ներկայացվում են ստանձված, կնքված և (կամ) ստորագրված ծրարով:
- 6) ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն քննարկակից և մրցույթի մասին հրավարակային ծանուցման մեջ նշված թվով կրկնօրինակներից:
- 7) մրցույթի մասնակիցները պատասխանատվություն են կրում իրենց ներկայացրած փաստաթղթերը արժանահավատության համար:
11. Մրցույթի հայտը հանձնաժողովի քարտուղարի կողմից գրանցվում է ամանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, տարիքը, տեղը, ամսաթիվը և ժամը:
12. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը կատարվում է Նոր Գեղի համայնապետարանում՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից, հասցևն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ. Նոր Գեղի Ֆ.Թևոսյան փողոց 64 հասցևում:
13. Հայտերի հաստատված ձևերը ստանալիս քաղաքացիներին տրամադրվում է ծրարով ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը:
14. Հայտերի ընդունման աշխատանքները և փաստաթղթերի ձևակերպումը ավարտելուց հետո համապատասխան աշխատակցի կողմից հայտատուին տրվում է կտրոն՝ հայտի ընդունման վերաբերյալ:
15. Հայտերն ընդունվում են բացառապես սույն ընթացակարգում նշված փաստաթղթերի՝ ներկայացումից հետո, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00 ից 18:00 (ընդմիջում 13:00-14:00):
16. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 (երեք) աշխատանքային օր առաջ:
17. Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի օրը՝ ներառյալ մրցույթի անցկացման օրը, վճարում են նախաձեռնար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 5 (հինգ) տոկոսի չափով:
18. Մրցույթը անց է կացվում Նոր Գեղի համայնապետարանի շենքում հրավարակային ծանուցման մեջ նշված օրը և ժամին:
19. Հայտատուի նկատմամբ պատասխանատու անձանց կողմից ստեղծված արհեստական դժվարությունների մասին հայտատուն կարող է տեղյակ պահել հանձնաժողովի նախագահին:
20. «Հրավարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը, ինչպես նաև մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված մրցույթի հայտերն առանց բացվելու մերժվում են և վերադարձվում են ներկայացնողին:
21. Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու ժամկետի ավարտը, կարող են փոխել կամ հետ վերցնել հայտերը:
22. Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է «Հրավարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով՝ «փոփոխում» բառը:
23. Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են մրցույթի հայտերը ուղարկել պատվիրված նամակով:
24. Մասնակիցները կարող են նույն կարգով հետ վերցնել մրցույթի հայտը:
25. Մրցույթի արդյունքներն ամփոփելիս և հաղթողին որոշելիս՝ մրցութային հանձնաժողովի հաշիվ է անում առաջարկվող բավազույն պայմանները: Առանձին դեպքերում կարող են հաշիվ անվել նաև՝
 - 1) բիզնես ծրագիրը և հողամասի օգտագործման տեխնիկատնտեսագիտական հիմնավորումները,
 - 2) հողերի բարելավման, կոյտուր տեխնիկական միջոցառումների իրականացման, նոր հողերի յուրացման, բնապահպանական և պատմամշակութային միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունները,
 - 3) արտադրության կազմակերպման, քաղաքաշինական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը, օբյեկտի կարճ ժամանակում կառուցման և շահագործման հնարավորությունը.

- 4) հողամասի սացիոնալ օգտագործման կրաշխիքները, համայնքի սոցիալ տնտեսական գարգացման, ազատ աշխատուժի օգտագործման նախատեսումը,
 - 5) համայնքի մշտական բնակիչ իններու կամ իրավաբանական անձի գրանցման հանգամանքը:
26. Մրցութային հանձնաժողովը բացում և գնահատում է մրցույթի հայտերը և որոշում է մրցույթի հաղթողին:
27. Մրցութային հանձնաժողովը որոշումներ է ընդունում ծայների պարզ մեծամասնությամբ:
28. Մրցութային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որը ստորագրվում է մրցույթի նստին մասնակցած հանձնաժողովի անդամների և մրցութային հաղթողի կողմից:
29. Մրցույթի հաղթողին որոշելիս առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք:
30. Արձանագրության մեջ նշվում են մրցույթի հաղթողի տվյալները, հողամասի վարձակալության ժամկետները, հողամասի և վարձավճարի չափերը, հողամասի օգտագործման նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի օգտագործման պայմանները, մրցույթի հաղթողին ստացվող իրավունքները, ինչպես նաև մրցութային սահմանված մյուս պայմանները:
31. Տրամադրված հողամասի դիմաց գանձվող վարձավճարի կամ կառուցապատման վճարի չափը և վճարման պայմանները սահմանվում են պայմանագրով՝ մրցույթի արդյունքների հիման վրա:
32. Եթե մասնակիցը մրցութային չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվում է նրան:
33. Մրցութային հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մոտ ձեռքով նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:
34. Մրցույթի հայտերը բացվում են մրցույթի մասին հրապարակային ծանուցմանը նախատեսված օրը և ժամին, մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում:
35. Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են.
- 1) մրցույթի հայտ ներկայացրած յուրաքանչյուր անձի ծածկանունը, իսկ եթե տվյալ անձը չի առերկրում, ապա նաև նրա անունը (անվանումը),
 - 2) մրցույթի հայտեր ներկայացնելու համապատասխանությունը օրենքի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին,
 - 3) ամփոփ տվյալներ՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
36. Մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին, ծանուցանալ մրցույթի նիստերի
37. Մրցույթի հայտերն ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշվում է՝
- 1) մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի ամփոփման վայրը, ամսաթիվը, և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները,
 - 2) մրցույթի մասնակիցների անունները (անվանումները) և գտնվելու (բնակության) վայրը,
 - 3) տեղեկություններ՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին,
 - 4) մրցութային հաղթողի անունը (անվանումը),
 - 5) այլ անհրաժեշտ տեղեկություններ:
38. Մրցութային հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է
39. Մրցութային հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը, որն իր մեջ ներառում է տվյալներ մրցույթի անցկացման վայրի, ժամկետի մասնակիցների և կազմակերպչի, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին:
40. Մրցութային հաղթած անձն արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մոտ ձեռքով նախավճարը: Նա գրկվում է նաև մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի օգտագործման կամ կառուցապատման իրավունքից: Եթե մրցույթի արձանագրությունն ստորագրելուց հրաժարվում է հանձնաժողովը, ապա կազմակերպիչը պարտավոր է մրցութային հաղթած անձի նախավճարը վերադարձնել կրկնակի չափով:

41. Մրցույթում առաջարկված հավասար պայմանների ղեկբում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի բնակիչին կամ տվյալ համայնքում գրանցված իրավաբանական անձին, որտեղ գտնվում է հողամասը:
42. Մրցույթի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա Նոր Գեղիի համայնքապետարանի կամ նրա անունից համապատասխան լիազորված անձի և մրցույթում հաղթողի միջև կնքվում է պայմանագիր:
43. Պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
44. Մրցույթը չկայացած է համարվում, եթե ներկայացվել է միայն մեկ հայտ: Այդ դեպքում մրցույթը պետք է հայտարարվի չկայացած ոչ ուշ, քան դրա անցկացման հաջորդ օրը: Մրցույթի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:
45. Մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը կարող է հայտարարվել ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում:
46. Հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու համար կազմվում է հողաշինարարական գործ, որում ներառվում են մրցույթի պայմաններով նախատեսված փաստաթղթերը:
47. Մրցույթների արդյունքների հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:
48. Մրցույթի մասին հրապարակային ծանուցումները
Մրցույթի անցկացման մասին կատարվում է հրապարակային ծանուցում՝ դրա սկզբնական առնվազն մեկ ամիս առաջ: Հրապարակային ծանուցումները պարունակում են՝
 - 1) մրցույթի կազմակերպչի անունը (անվանումը),
 - 2) մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն),
 - 3) հայտերի ընդունման ժամանակահատվածը՝ նշելով ժամերն ու օրերի,
 - 4) մրցույթի ձևը և անցկացման կարգը,
 - 5) լուսի նկարագրությունը (անվանումը), մրցույթի պայմանները,
 - 6) մրցույթին մասնակցելու գինը, նախավճարի չափը, ինչպես նաև վճարելու կարգը և ժամկետները,
 - 7) մրցույթի հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը,
 - 8) մրցույթում ծածկագրեր կիրառելու կարգը, ինչպես նաև մրցույթում մասնակցության ձևակերպման, մրցույթում հաղթած անձի որոշման, ինչպես նաև մրցույթի առարկայի նախնական գնի մասին,
 - 9) մրցույթի քննասկարզին և մյուս մանրամասներին ծանոթանալու վայրը և տրամադրելու կարգը:
 - 10) մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը
49. Սակարկությանը պայմանագիր կնքելու պայմանները.
 - 1) Մրցույթում հաղթող ճանաչվում է այն մասնակիցը, որն առաջարկել է լավագույն պայմաններ:
 - 2) Արձանագրությունը ստորագրելու պահից սակարկություններում հաղթողին է անցնում համապատասխան պայմանագիր կնքելու իրավունքը, բնդ որում՝ պայմանագրի պայմանները պետք է համապատասխանեն մրցույթի սակարկությունների մասին հրապարակային ծանուցմանը սահմանված պայմաններին:
 - 3) Պայմանագրով ամրագրված պայմանների և սահմանված ժամանակացույցի խախտման դեպքում կազմակերպիչը իրավասու է ուսումնասիրության արդյունքների հիման վրա չեղյալ համարել պայմանագիրը առանց կատարված աշխատանքների դիմաց ֆինանսական հատուցումների, անհրաժեշտության դեպքում մրցույթում հաղթողի հաշվին սպանովելով հողամասի սկզբնական տեսքին բերելու հետ կապված հարցերը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԶԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆԱԿՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԳԻՍԱՅՈՂ,
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԳՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐԿՄԱՆ ԵՎ ԱՆՅԿԱՅՄԱՆ

1. Նոր Գեղի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդների կազմակերպման ու անցկացման հետ կապված գործընթացները և հողամասերն աճուրդային կարգով օտարման աշխատանքների կազմակերպումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-464-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 67-70-րդ, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման, Նոր Գեղի համայնքի ղեկավարի սույն որոշման պահանջներին և սույն կանոնակարգին համապատասխան:

2. Աճուրդներն անցկացվում են Նոր Գեղի համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված՝ Նոր Գեղի համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի հրապարակային սակարկությունների՝ աճուրդների, կազմակերպման և անցկացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով), կողմից:

3. Աճուրդը սակարկությունների ձև է, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին:

4. Աճուրդի մասնակիցներ կարող են դառնալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հանդիսանալ հողամասի սեփականության իրավունքի տարեկա:

5. Աճուրդի մասնակիցներ չեն կարող լինել այն անձինք, որոնք սակարկություններով վաճառվող թափ նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

6. Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի առարկա հանդիսացող առանձնացված հողամասերի վերաբերյալ տեղեկություններ են ստանում «azdarar.am» պաշտոնական ինտերնետային կայքում և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվող ծանուցումներից:

7. Հետաքրքրող հողամասի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ բաղաբացիները կարող են ստանալ Նոր Գեղի համայնքապետարանում:

8. Հայտերի ձևերին, աճուրդների կազմակերպման ընթացակարգին ծանոթանալուց հետո, բաղաբացիները կարող են դիմել հանձնաժողովի քարտուղարին՝ հետաքրքրող հողամասերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

9. Բաղաբացիների ցանկության և պահանջի դեպքում աճուրդի կազմակերպչի կողմից բաղաբացուն տրամադրվում է աճուրդի կազմակերպման ընթացակարգի և հետաքրքրող հողատասի աճուրդային փաթեթը (եկակետային տվյալներ, գլխավոր հատակագծի օրինակ, ճարտարապետահատակագծային առաջադրանք, տիպային պայմանագրի օրինակ, նշահարման ակտ, հասցեի սրահապլանն մասին տեղեկանք):

10. Բաղաբացիները աճուրդի փաթեթին ծանոթանալուց, հողամասի սխեմատիկ ուսումնասիրությունից հետո տեղում (ընդթյան մեջ) բնորված տարածքին ծանոթանալու ցանկության դեպքում կարող են այցելել հողատարածք սակարկությունների կազմակերպչի կողմից ինստրված համապատասխան մասնագետների ուղեկցությամբ:

11. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

- 1) հայտ՝ նշելով հողամասի ձևաքերման նպատակը
- 2) աճուրդին մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր

3) անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:

12. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը կատարվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից Նոր Գեղիի համայնքապետարանում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Նոր Գեղի Ֆ.Թևոսյան փողոց 6-Է վարչական շենք:

13. Հայտերի ընդունման աշխատանքները և փաստաթղթերի ձեռակերպումը ավարտելուց հետո հանձնաժողովի քարտուղարի կողմից հայտատուին տրվում է կտրոն՝ հայտի ընդունման վերաբերյալ:

14. Հայտերն ընդունվում են բացառապես սույն կանոնակարգում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00 ից 18:00 (ընդմիջում 13:00 14:00):

15. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է, աճուրդի անցկացման օրվանից 3(երեք) օր առաջ:

16. Աճուրդի մասնակիցները մինչև աճուրդի օրը՝ ներառյալ աճուրդի անցկացման օրը, վճարում են նախավճար՝ տվյալ հոդամասի մեկնարկային գնի 5 (հինգ) տոկոսի չափով:

17. Աճուրդի ընթացքում վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

18. Աճուրդը անց է կացվում Նոր Գեղիի համայնքապետարանի շենքում՝ հրապարակային ծանուցման մեջ նշված օրը և ժամին:

19. Հայտատուի նկատմամբ պատասխանատու անձունը կողմից ստեղծված սրհնատական դժվարությունների մասին հայտատուն կարող է տեղյակ պահել հանձնաժողովի նախագահին:

20. Աճուրդի անցկացման օրը հանձնաժողովի հերթական նիստում քննարկում է, աճուրդի դրված հոդամասերի մեկնարկային գնի նկատմամբ կիրառվող հավելածի քայի չափը (առանձնացված լոտերով, ոչ պակաս մեկնարկային գնի 5.0 % ից), որի մասին աճուրդավարը տեղյակ է պահում հայտատուներին՝ յուրաքանչյուր լոտի համար սկսվող աճուրդից առաջ:

21. Նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը:

22. Աճուրդը բացվում է, հայտարարությանը: Հայտարարության մեջ նշվում է, աճուրդում վաճառվելիք լոտի անունը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, սղ թվում՝ հավելածի քայի չափը:

23. Հայտատուները աճուրդը սկսվելու պահից պետք է քայլ կատարեն հանձնաժողովի կողմից հաստատված հավելածի քային պատիկ քայի չափով՝ նշահամարի բարձրացման կարգով: Ցանկացած հայտատու իրավունք ունի նախքան աճուրդավարի կողմից 3 րդ անգամ հավելածի հայտարարված չափը կրկնելը, ներկայացնել նոր գնային հայտ՝ բարձրացնելով նշահամարը, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը:

24. Վերջին ամենարձր գնային հայտ ներկայացնող մասնակիցը, աճուրդավարի կողմից 3 րդ անգամ հայտարարված գնային հայտը կրկնելուց հետո, համարվում է, աճուրդում հաղթած մասնակից:

25. Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

26. Աճուրդի արդյունքներով կամ դրա չկայացման դեպքում աճուրդն անցկացնելու օրը կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրում են աճուրդի կազմակերպիչը և հաղթող մասնակիցը:

27. Արձանագրությունը պահպանվում է, աճուրդը կազմակերպող հանձնաժողովի կողմից:

28. Աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է, նախավճարի գումարը, չի վերադարձվում մասնակցության վճարը: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդում հաղթած և հոդամասը գնելուց հրաժարված անձի կողմից ստեղծված նախավճարը չի վերադարձվում:

29. Աճուրդի հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

30. Աճուրդը չկայացած է, համարվում, եթե ներկայացվել է միայն մեկ հայտ: Այդ դեպքում աճուրդը պետք է հայտարարվի չկայացած ոչ ուշ, քան դրա անցկացման հաջորդ օրը: Աճուրդի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

31. Աճուրդը չկայանալու դեպքում կրկնաճուրդ կարող է հայտարարվել ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում՝ քաղաքային պլանավորման նշանակության հողամասերի, որոնց կրկնաճուրդ անց է կացվում 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրատարակայնությունը:

32. Անդրմեկ ի գիտություն, որ աճուրդներն իրականացվում են փակ, որին՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ կետի, մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը:

33. Աճուրդի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողի կադաստրային արժեքի 50 (միսուն) տոկոսից՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի:

34. Աճուրդի մասին հրատարակային ծանուցումները Աճուրդի անցկացման մասին կատարվում է հրատարակային ծանուցում՝ դրա սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ:

Հրատարակային ծանուցումները պարունակում են

- 1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը
- 2) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը)
- 3) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն)
- 4) աճուրդի ձևը և անցկացման կարգը
- 5) աճուրդի պայմանները և պահանջները, որն իր մեջ ներառում է՝
- 6) հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը,
- 7) հողամասի չափը,
- 8) հողամասի գտնվելու վայրը և ճանկազիրը, աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինը,
- 9) հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը,
- 10) գյուղատնտեսական հողատեսակի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, արոտեկանիկական պայմանները,
- 11) շրջակա միջավայրի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները:
- 12) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը
- 13) աճուրդում հաղթողին որոշելու կարգը
- 14) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները
- 15) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը
- 16) ընդհանուր աճուրդի դեպքում՝ լոտերի վաճառքի երթմանությունը
- 17) աճուրդի կանոնակարգին և մյուս մանրամասներին ծանուցանալու վայրը և կանոնակարգի պատճենը արձանագրելու կարգը:

35. Սակարկությանը պայմանագիր կնքելու պայմանները

- 1) աճուրդի հաղթող ճանաչվում է, ամենարժեք գին առաջարկված մասնակիցը:
- 2) աճուրդով սակարկություններում հաղթողի հետ արձանագրությունը ստորագրելու պահից նրան է անցնում համապատասխան լոտի վերաբերյալ առավաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

3) աճուրդում հաղթած անձը արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 (տաս) օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում տվյալ լոտի համար ձևավորված գինը՝ հաշվանցելով մոծված նախավճարի գումարը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա հաղթող է ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկված անձը, որը նույնպես պարտավոր է 10 (տաս) օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:

4) Սակարկությունների արդյունքում ձևավորված գինը, հողամասերի ելակետային տվյալների նախագծային փաստաթղթերի և հատակագծերի պատրաստման, հողամասերի հասցեավորման համար հաշվարկված վճարները ամբողջությամբ վճարելուց հետո 2 օրվա ընթացքում կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ

1. Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի մրցույթների կազմակերպման ու անցկացման հետ կապված գործընթացները և գույքը մրցութային կարգով տրամադրելու աշխատանքների կազմակերպումն իրականացվում է ՀՀ քաղաքական օրենսգրքի 463 464-րդ հոդվածների, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի, Նոր Գեղի համայնքի ղեկավարի սույն որոշման պահանջներին և սույն ընթացակարգին համապատասխան:

2. Մրցույթներն անցկացվում են Նոր Գեղի համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված՝ Նոր Գեղի համայնքի սեփականությունը համարվող գույքի և համայնքի փարչական սահմաններում գտնվող հողամասերի հրապարակային սակարկությունների՝ մրցույթների, կազմակերպման և անցկացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից:

3. Մրցույթը սակարկությունների ձև է, որի ընթացքում հաղթող ճանաչվում է այն մասնակիցը, հանձնաժողովի եզրակացությամբ, որն առաջարկել է լավագույն պայմանները:

4. Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի մրցույթները՝ (այսուհետ՝ մրցույթ), անցկացվում են բաց, որին կարող է մասնակցել ցանկացած անձ:

5. Մրցույթի մասնակիցներ կարող են դառնալ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

6. Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի առարկա հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկություններ են ստանում «azdarar.am» պաշտոնական ինտերնետային կայքում և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվող ծանուցումներից:

7. Հետաքրքրող գույքի վերաբերյալ տեղեկություններ քաղաքացիները կարող են ստանալ Նոր Գեղի համայնքապետարանում:

8. Քաղաքացիների ցանկության և պահանջի դեպքում մրցույթի կազմակերպչի կողմից քաղաքացուն տրամադրվում է մրցույթի կազմակերպման ընթացակարգի և հետաքրքրող գույքի մրցութային փաթեթի՝ մրցութին մասնակցել ցանկացողների կողմից ծրարով ներկայացվող փաստաթղթերի ցանկ, ելակետային տվյալներ, տիպային պայմանագրի օրինակ:

9. Քաղաքացիները փաթեթին ծանոթանալուց, գույքի սխեմատիկ ուսումնասիրությունից հետո կողմ գույթին ծանոթանալու ցանկության դեպքում կարող են այցելել գույքի գտնվելու վայր սակարկությունների կազմակերպչի կողմից լիազորված համապատասխան մասնագետների ուղեկցությամբ:

10. Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են.

- 1) սահմանված ձևի հայտ,
- 2) մասնակցության վճարի անդորրագրի օրինակը և անձնագիրը,
- 3) իրավաբանական անձինք՝ պետական գրանցման վկայականի և կանոնադրության հաստատված պատճեն և մասնակցության վճարի անդորրագրի օրինակը,
- 4) մրցույթի անցկացման ծանուցման մեջ նշված չափով նախավճարը մուծված լինելու մասին անդորրագիրը:
- 5) մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված և (կամ) ստորագրված ծրարով:
- 6) ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված թվով կրկնօրինակներից:
- 7) մրցույթի մասնակիցները պատասխանատվություն են կրում իրենց ներկայացրած փաստաթղթերի արժանահավատության համար:

11. Սրբույթի հայտը հանձնաժողովի քարտուղարի կողմից գրանցվում է առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը:

12. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը կատարվում է Նոր Գեղիի համայնքապետարանում՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Նոր Գեղի Ֆ.Թևոսյան փողոց 64 վարչական շենք:

13. Հայտերի հաստատված ձևերը ստանալիս քաղաքացիներին տրամադրվում է ծրարով ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը:

14. Հայտերի ընդունման աշխատանքները և փաստաթղթերի ձևակերպումը ավարտելուց հետո համապատասխան աշխատակցի կողմից հայտատուին տրվում է կտրոն՝ հայտի ընդունման վերաբերյալ:

15. Հայտերն ընդունվում են բացառապես սույն ընթացակարգում նշված փաստաթղթերի ներկայացումից հետո, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00 ից 18:00 (ընդմիջում 13:00 14:00):

16. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

17. Սրբույթի մասնակիցները մինչև մրցույթի օրը՝ ներառյալ մրցույթի անցկացման օրը, հրապարակային ծանուցմամբ նախատեսված կարգով, չափով և ժամկետներում վճարում են նախավճար:

18. Սրբույթը անց է կացվում Նոր Գեղիի համայնքապետարանի շենքում հրապարակային ծանուցման մեջ նշված օրը և ժամին:

19. Հայտատուի նկատմամբ պատասխանատու անձանց կողմից ստեղծված արհեստական դժվարությունների մասին հայտատուն կարող է տեղյակ պահել հանձնաժողովի նախագահին:

20. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը, ինչպես նաև մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված մրցույթի հայտերն առանց բացվելու մերժվում են և վերադարձվում են ներկայացնողին:

21. Սրբույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու ժամկետի ավարտը, կարող են փոխել կամ հետ վերցնել հայտերը:

22. Սրբույթի հայտի փոփոխությունը կատարվում է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

23. Սրբույթին մասնակցել ցանկացողները կարող են մրցույթի հայտերը ուղարկել պատվիրված նամակով:

24. Մասնակիցները կարող են նույն կարգով հետ վերցնել մրցույթի հայտը:

25. Սրբույթի արդյունքներն ամփոփելիս և հաղթողին որոշելիս՝ մրցութային հանձնաժողովը հաշվի է առնում առաջարկվող լավագույն պայմանները: Առանձին դեպքերում կարող են հաշվի առնվել նաև՝

1) բիզնես ծրագիրը և գույքի օգտագործման տեխնիկատնտեսագիտական հիմնավորումները,

2) համայնքի մշտական բնակիչ լինելու կամ իրավաբանական անձի գրանցման հանգամանքը:

26. Սրբութային հանձնաժողովը բացում և գնահատում է մրցույթի հայտերը և որոշում է մրցույթի հաղթողին:

27. Սրբութային հանձնաժողովը որոշումներ է ընդունում ձայների պարզ մեծամասնությամբ:

28. Սրբութային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որը ստորագրվում է հանձնաժողովի **նիստին ներկա** անդամների և մրցութային հաղթողի կողմից:

29. Սրբութային հաղթողին որոշելիս առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք:

30. Արձանագրության մեջ նշվում են մրցույթի հաղթողի տվյալները, գույքի վարձակալության ժամկետները, վարձավճարի չափերը, գույքի օգտագործման նպատակային նշանակությունը, գույքի

օգտագործման պայմանները, մրցույթի հաղթողին տրվող իրավունքները, ինչպես նաև մրցույթում սահմանված մյուս պայմանները:

31. Տրամադրված գույքի դիմաց գանձվող վարձավճարի չափը և վճարման պայմանները սահմանվում են պայմանագրով՝ մրցույթի արդյունքների հիման վրա:

32. Եթե մասնակիցը մրցույթում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվում է նրան:

33. Մրցույթում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

34. Մրցույթի հայտերը բացվում են մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված օրը և ժամին, մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում:

35. Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են.

1) մրցույթի հայտ ներկայացրած յուրաքանչյուր անձի ծածկանունը, իսկ եթե տվյալ անձը չի առարկում, ապա նաև նրա անունը (անվանումը),

2) մրցույթի հայտեր ներկայացնելու համապատասխանությունը օրենքի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին,

3) ամփոփ տվյալներ՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

36. Մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին, ծանոթանալ մրցույթի նիստերի արձանագրություններին:

37. Մրցույթի հայտերն ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշվում է՝

1) մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի ամփոփման վայրը, ամսաթիվը, և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները,

2) մրցույթի մասնակիցների անունները (անվանումները) և գտնվելու (բնակության) վայրը,

3) տեղեկություններ՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին,

4) մրցույթում հաղթողի անունը (անվանումը),

5) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

38. Մրցութային հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

39. Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմ նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը, որն իր մեջ ներառում է տվյալներ մրցույթի անցկացման վայրի, ժամկետի մասնակիցների և կազմակերպչի, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին:

40. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում հորցնում է մուծած նախավճարը: Եթե մրցույթի արձանագրությունն ստորագրելուց հրաժարվում է հանձնաժողովը, ապա կազմակերպիչը պարտավոր է մրցույթում հաղթած անձի նախավճարը վերադարձնել կրկնակի չափով:

41. Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի բնակչին կամ տվյալ համայնքում գրանցված իրավաբանական անձին, որտեղ գտնվում է գույքը:

42. Մրցույթի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա Երր Գեղիի համայնքապետարանի կամ նրա անունից համապատասխան լիազորված անձի և մրցույթում հաղթողի միջև կնքվում է պայմանագիր:

43. Պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

44. Մրցույթը չկայացած է համարվում, եթե ներկայացվել է միայն մեկ հայտ: Այդ դեպքում մրցույթը պետք է հայտարարվի չկայացած ոչ ուշ, քան դրա անցկացման հաջորդ օրը: Մրցույթի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

45. Մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը կարող է հայտարարվել «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում:

46. Մրցույթների արդյունքների հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

47. Մրցույթի մասին հրապարակային ծանուցումները:

Մրցույթի անցկացման մասին կատարվում է հրապարակային ծանուցում՝ դրա սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ: Հրապարակային ծանուցումները պարունակում են՝

- 1) մրցույթի կազմակերպչի անունը (անվանումը),
- 2) մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն),
- 3) հայտերի ընդունման ժամանակահատվածը՝ նշելով ժամերն ըստ օրերի,
- 4) մրցույթի ձևը և անցկացման կարգը,
- 5) յոտի նկարագրությունը (անվանումը), մրցույթի պայմանները,
- 6) մրցույթին մասնակցելու գինը, նախավճարի չափը, ինչպես նաև վճարելու կարգը և ժամկետները,
- 7) մրցույթի հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը,
- 8) մրցույթում ծածկագրեր կիրառելու կարգը, ինչպես նաև մրցույթում մասնակցության ձևակերպման, մրցույթում հաղթած անձի որոշման, ինչպես նաև մրցույթի առարկայի նախնական գնի մասին,
- 9) մրցույթի ընթացակարգին և մյուս մանրամասներին ծանոթանալու վայրը և տրամադրելու կարգը:
- 10) մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

48. Սակարկությամբ պայմանագիր կնքելու պայմանները:

- 1) մրցույթում հաղթող ճանաչվում է այն մասնակիցը, որն առաջարկել է լավագույն պայմաններ:
- 2) արձանագրությունը ստորագրելու պահից սակարկություններում հաղթողին է անցնում համապատասխան պայմանագիր կնքելու իրավունքը, ընդ որում՝ պայմանագրի պայմանները պետք է համապատասխանեն մրցույթի սակարկությունների մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին
- 3) պայմանագրով ամրագրված պայմանների և սահմանված ժամանակացույցի խախտման դեպքում կազմակերպիչը իրավասու է ուսումնասիրության արդյունքների հիման վրա չնղյալ համարել պայմանագիրը՝ առանց կատարված աշխատանքների դիմաց ֆինանսական հատուցումների, անհրաժեշտության դեպքում՝ մրցույթում հաղթողի հաշվին ապահովելով գույքի սկզբնական տեսքին բերելու հետ կապված հարցերը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՆՆԳԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԳՆԵՐԻ
ԿԱԶՄԱՎԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ
ԼՐՆԳՆԱԿՆԵՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդների կազմակերպման և անցկացման կարգը:
2. Նոր Գեղի համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի աճուրդների կազմակերպման ու անցկացման հետ կապված գործընթացները և գույքն աճուրդային կարգով օտարման աշխատանքների կազմակերպումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքին, սույն կանոնակարգին համապատասխան:
3. Աճուրդներն անցկացվում են Նոր Գեղի համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված՝ Նոր Գեղի համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի և համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի հրապարակային սակարկությունների՝ աճուրդների, կազմակերպման և անցկացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից:
4. Աճուրդը սակարկությունների ձև է, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին:
5. Աճուրդի մասնակիցներ կարող են դառնալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:
6. Աճուրդի մասնակիցներ չեն կարող լինել այն անձինք, որոնք սակարկություններով վաճառվող լուրի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չեն կարող ունենալ սեփականության իրավունք:
7. Աճուրդին չեն կարող մասնակցել աճուրդի կազմակերպիչը, իրավաբանական անձ համարվող կազմակերպիչի հիմնադիրները (մասնակիցները), կազմակերպիչի աշխատակիցները: Աճուրդին չեն կարող մասնակցել նաև աճուրդավարի երկխոսները, ծնողները, տատր, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի անուանու ծնողներ, տատր, պապը, եղբայրները և քույրերը:
8. Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի առարկա հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկություններ են ստանում «azdarar.am» պաշտոնական ինտերնետային կայքում և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվող ծանուցումներից:
9. Տնտարքրող գույքի վերաբերյալ տեղեկություններ քաղաքացիները կարող են ստանալ Նոր Գեղի համայնքապետարանում: Հայտերի ձևերը, աճուրդների կազմակերպման ընթացակարգը, համայնքի ղեկավարի համապատասխան որոշումը, հրապարակային ծանուցումները մատչելի և տեսանելի ձևով տեղակայված են առաջին հարկում:
10. Հայտերի ձևերին, աճուրդների կազմակերպման ընթացակարգին ծանոթանալուց հետո, քաղաքացիները կարող են դիմել հանձնաժողովի քարտուղարին հետարքրող գույքի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար:
11. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը կատարվում է Նոր Գեղի համայնքապետարանում հանձնաժողովի քարտուղարի կողմից, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Նոր Գեղի Ֆ.Թևոսյան փողոց 64 Նոր Գեղի համայնքապետարանի վարչական շենք:
12. Հայտատուի նկատմամբ պատասխանատու անձանց կողմից ստեղծված արհեստական դժվարությունների մասին հայտատուն կարող է տեղյակ պահել հանձնաժողովի նախագահին

2. ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

13. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի աճուրդի բացումից առնվազն տասնհինգ օր առաջ:
14. Շուտ փչացող ապրանքների դեպքում աճուրդի մասին հրապարակային ծանուցումը կարող է կատարվել աճուրդի բացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:
15. Աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
16. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները՝
 - 1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը
 - 2) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը)
 - 3) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն)
 - 4) աճուրդի ձևը և անցկացման կարգը
 - 5) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը և (կամ) արտադրման տարեթիվը), լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմանները
 - 6) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը
 - 7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը
 - 8) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները
 - 9) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը
 - 10) բնդիանուր աճուրդի դեպքում՝ լոտերի վաճառքի հերթականությունը
 - 11) աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը:

3. ԱՃՈՒՐԴԻՆ ՄԱՍԻՆ ԱԿՑԵՆՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

17. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝
 - 1) աճուրդին մասնակցելու հայտ
 - 2) աճուրդին մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր.
 - 3) անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:
18. Հայտերի բնդունման աշխատանքները և փաստաթղթերի ձևակերպումը ավարտելուց հետո հանձնաժողովի քարտուղարի կողմից հայտատուին տրվում է կտրոն՝ հայտի բնդունման վերաբերյալ:
19. Հայտերն բնդունվում են բացառապես սույն կանոնակարգում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-ից 18:00 (բնդմիջում՝ 13:00-14:00):
20. Սահմանված հայտը լրացնելու և նախավճարը վճարելու դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մասնակցին տրամադրել մասնակցի վկայական, որտեղ նշվում է աճուրդի կազմակերպչի անվանումը, վճարված նախավճարի չափը, աճուրդի անցկացման վայրը (հասցեն) և ժամանակը:
21. Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք, աճուրդի մասին ծանուցման մեջ սահմանված չափով, ժամկետներում և կարգով, մուծում են նախավճար, որի չափը չի կարող գերազանցել աճուրդում վաճառվող ամենարժր մեկնարկային գին ունեցող լոտի գնի մինչև 5 (հինգ) տոկոսը:
22. Նախավճարը մուծվում է աճուրդի կազմակերպչին: Նախավճարը կարող է վճարվել կանխիկ:
23. Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակցից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը (պատիկետ՝ մասնակցից չհամարվել անձինք): Աճուրդի մասնակիցները և մասնակցից չհամարվել անձինք աճուրդի անցկացման դադարում գրադեզմում են առանձին նստատեղեր :

24. Անուրդի մասնակից չհամարվող անձանց համար ածուրդային հանձնաժողովը սահմանում է մետքի վճար, որի չափը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի ներկայատիկը:

25. Անուրդի ընթացքում վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

26. Անուրդի մասնակիցներին մասնակցի վկայականներ տրամադրելը, ինչպես նաև ածուրդի մասնակից չհամարվող անձանց տոմսերի վաճառքը պետք է դադարի ածուրդի քաջունից ստեղծված 30(երեսուն) րոպե առաջ:

27. Անուրդի անցկացման օրը հանձնաժողովը հեղթական նիստում քննարկում է ածուրդի դրված գույքի մեկնարկային գնի նկատմամբ կիրառվող հավելածի քայլի չափը (առանձնացված յոսերով, ոչ պակաս մեկնարկային գնի 5.0 %-ից), որի մասին ածուրդավարը տեղյակ է պահում հալոսառուներին՝ յուրաքանչյուր յոսի համար սկսվող ածուրդից առաջ:

4. ԼՈՏԻ ՈՒՍՈՒՄՆԵԱՍԻՐՈՒՄԸ

28. Քաղաքացիների ցանկության և պահանջի դեպքում ածուրդի կազմակերպչի կողմից քաղաքացուն տրամադրվում է ածուրդի կազմակերպման ընթացակարգի և հետաքրքրող գույքի ածուրդային փաթեթը:

29. Կազմակերպչը ճանուցման պահից սկսած ընձևում է հնարավորություն ածուրդում վաճառվող յոսն ուսումնասիրելու համար՝ հետևյալ կարգով և ժամկետներում.

1) անշարժ գույքի համար՝ հրապարակային ճանուցման պահից մինչև ածուրդի քաջմանը նախորդող օրը՝ տրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում (քաջատոքայանը 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի),

2) շարժական գույքի համար՝ հրապարակային ճանուցման պահից մինչև ածուրդի քաջմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-13:00 ընկած ժամանակահատվածում:

30. Քաղաքացիները ածուրդում վաճառվող յոսն ուսումնասիրելու համար ցանկության դեպքում սույն կանոնակարգի 24-րդ կետում նշված կարգով և ժամկետներում կարող են այցելել գույքի գտնվելու վայր՝ ածուրդի կազմակերպչի կողմից լիազորված համապատասխան մասնագետների ուղեկցությամբ:

5. ԱՃՈՒՐԳԻ ԸՆԹԱՅՔԸ

31. Ածուրդը անց է կացվում Նոր Գեղիի համայնքապետարանի շենքում, հրապարակային ճանուցման մեջ նշված օրը և ժամին:

32. Նախքան ածուրդի սկսելը կազմակերպչը գրանցում է ածուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև ածուրդի մասին հրապարակային ճանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը:

33. Ածուրդը քաջվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է ածուրդում վաճառվելիք յոսի անունը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, յոսի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև ածուրդի անցկացման ձևը, այդ թվում գնային հայտեր ներկայացնելու կարգը:

34. Հայտատուները ածուրդը սկսվելու պահից պետք է քայլ կատարեն հանձնաժողովի կողմից հաստատված հավելածի քայլին պատիկ քայլի չափով՝ նշահամարի րարձրացման կարգով: Ցանկացած հայտատու իրավունք ունի, նախքան ածուրդավարի կողմից 3-րդ անգամ հավելածի հայտարարված չափը կրկնելը, ներկայացնել նոր գնային հայտ՝ րարձրացնելով նշահամարը, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման չափով:

35. Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացնող մասնակիցը, ածուրդավարի կողմից 3-րդ անգամ հայտարարված գնային հայտը կրկնելուց հետո, համարվում է ածուրդում հաղթած մասնակից:

36. Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի րարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա ածուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

37. Լոտի վաճառքից հետո աճուրդի կազմակերպիչը և հաղթող մասնակիցը ստորագրում են աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը, և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

6. ԱՃՈՒՐԴԻ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

38. Աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը պահպանվում է աճուրդը կազմակերպող հանձնաժողովի կողմից:

39. Աճուրդի արդյունքների մասին արձանագրության մեջ նշվում են՝

- 1) աճուրդի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամանակը
- 2) լոտի անվանումը, լոտի վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները և այլ սահմանափակումներ, ինչպես նաև լոտի Վիճակը (արտադրության տարին, ֆիզիկական մաշվածության աստիճանը և այլն)
- 3) լոտի մեկնարկային գինը
- 4) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը
- 5) հաղթող ճանաչված մասնակցի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը
- 6) լոտի գնման գինը

40. Եթե հաղթող ճանաչված մասնակիցն արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

41. Արձանագրությունը ստորագրում են աճուրդն անցկացնելու օրը՝ հաղթող մասնակիցը և աճուրդի կազմակերպիչը:

7. ԼՈՏԻ ԳՆԻ ՎՃԱՐՈՒՄԸ

42. Աճուրդում հաղթած անձը արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 (տաս) օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում տվյալ լոտի համար ձևավորված գինը՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

